
ԱՏՐԻՖՈՒՏԱՅԻՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՐԺԵՔԸ ԱՆԳԼԵՐԵՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՏԵՔՍՏՈՒՄ

ԱՆՆԱ ՀԱԿՈՒՅԱՆ

Ինչպես հայտնի է, այլ լեզուներում սեռական հոլովի միջոցով դրսևորվող շարահյուսական հարաբերությունները ժամանակակից անգլերենում դրսևորվում են երեք եղանակով՝ Noun + Noun, Noun Genitive + Noun և Noun + of + Noun տիպի բառակապակցությունների միջոցով (օրինակ՝ the aircraft engine «ինքնաթիռի շարժիչը», my father's room «իմ հոր սենյակը» և the door of my room «իմ սենյակի դուռը»): Մրանցից Noun + Noun տիպի բառակապակցությունները, որոնք ժամանակակից անգլերենում գնալով մեծ տարածում են գտնում¹, կարող են արտահայտել ինչպես որոշիչ-որոշյալի, այնպես էլ հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություններ. հմմտ. մի կողմից՝ a stone wall «քարե պատ», a silver watch «արծաթե ժամացույց», a straw hat «ծղոտե գլխարկ» (որոշչային կիրառություններ), մյուս կողմից՝ complaints office «բողոքների բյուրո», Civil Rights Bill «քաղաքացիական իրավունքների օրինագիծ», aircraft engine «ինքնաթիռի շարժիչ» (հատկացուցչային կիրառություններ)²:

Իհարկե, անգլերենի տեսական քերականության մեջ որոշիչ և հատկացուցիչ լրացումները սովորաբար միմյանցից չեն տարբերակում՝ դրանք անվանելով մեկ ընդհանուր attribute բառով: Բայց, չնայած դրան, որոշիչ և հատկացուցչի իմաստային տարբերություններն ակնհայտորեն դրսևորվում են ինչպես մյուս լեզուներում, այնպես էլ անգլերենում: Մասնավորապես, որոշիչ լրացումը լրացյալին բնութագրում է որակական տեսանկյունից, մինչդեռ հատկացուցիչ լրացումը ցույց է տալիս լրացյալի ո՛ւմ կամ ինչի՛ն պատկանելը. օրինակ՝ անգլերեն language facts բառակապակցության մեջ language բառը facts (փաստեր) բառին լրացնում-բնութագրում է որակական տեսանկյունից՝ ընդգծելով, թե տվյալ դեպքում ինչպիսի՛ փաստեր են նկատի առնվում՝ լեզվական և ոչ թե արտալեզվական, մարդաբանական և այլ կարգի: Մինչդեռ facts of language բառակապակցության մեջ նույն language բառը ցույց է տալիս պատկանելություն՝ ընդգծելով, թե ինչի՛ն պատկանող փաստերն են

¹ Տե՛ս **Дубенец Э. М.** Лингвистические изменения в современном английском языке. М. – СПб. – Киев, 2003, էջ 13-16:

² Տե՛ս **Каушанская В. И. и др.** Грамматика английского языка. Л., 1973, էջ 253-254, **Дубенец Э. М.**, նշվ. աշխ., էջ 13-16, **В. Iyish**, The Structure of Modern English, Leningrad, 1971, էջ 172-173:

տվյալ դեպքում նկատի առնվում՝ լեզվի փաստերը և ոչ թե որևէ այլ բանի: Ընդ որում, լեզվական որոշակի համատեքստում գոյականի առկայացման դեպքում որոշիչ և հատկացուցիչ լրացումների իմաստային տարբերությունն ավելի ակնհայտ է դառնում. հմմտ. մի կողմից՝ the (these) language facts «(այս) լեզվական փաստերը», մյուս կողմից՝ the facts of the (this) language «(այս) լեզվի փաստերը»: Անշուշտ սխալ կլինե՞ր կարծել, թե անգլերենում գոյականները որոշչային արժեքով կիրառվում են միայն Noun + Noun տիպի բառակապակցություններում, իսկ հատկացուցչային արժեքով՝ միայն Noun + of + Noun տիպի բառակապակցություններում: Վերը մենք արդեն տեսանք, որ հատկացուցչային հարաբերությունը ևս կարող է արտահայտվել Noun + Noun տիպի բառակապակցության միջոցով (օր. aircraft engine): Մյուս կողմից՝ որոշչային հարաբերությունն էլ հաճախ կարող է արտահայտվել նաև Noun + of + Noun տիպի բառակապակցությամբ, օրինակ՝ a man of violence «հանդուգն մարդ», a fact of primary importance «հույժ կարևոր փաստ» և այլն:

Եթե նկատի ունենանք, որ բերված օրինակներում of-ը փոխարինում է սեռական հոլովածնին (Genitive Case), ապա նշված որոշիչ լրացումները կարելի է համեմատել տարբեր լեզուներում հանդիպող որակի սեռականի (Genetivus Qualitatis) որոշչային կիրառությունների հետ. հմմտ. լատիներեն vir magni ingenii «մեծ ինտելի տեր մարդ»³, ռուսերեն человек большого ума, судья международного класса⁴, ժամանակակից հայերեն *ուրցի թեյ*, *սարի ծաղիկ*⁵ և այլն: Ուստի, եթե հաշվի առնենք, որ ժամանակակից անգլերենի սեռական հոլովածնի միջոցով ևս կարող են արտահայտվել ոչ միայն հատկացուցչային, այլ նաև որոշչային իմաստներ (այսպես կոչված՝ նկարագրական սեռական - Descriptive Genitive), օրինակ՝ a summer's day «ամառային օր» և այլն⁶, ապա կարելի է ասել, որ ժամանակակից անգլերենում ասորիբուտային բառակապակցության վերը նշված երեք տեսակներն էլ (Noun + Noun, Noun Genetive + Noun, Noun + of + Noun) կարող են արտահայտել թե՛ որոշչային և թե՛ հատկացուցչային հարաբերություններ.

Noun + Noun - a stone wall (որոշչային կիրառություն), an aircraft engine (հատկացուցչային կիրառություն).

Noun Genetive + Noun - a summer's day (որոշչային կիրառություն), my father's room (հատկացուցչային կիրառություն).

Noun + of + Noun - a man of violence (որոշչային կիրառություն), a page of a book (հատկացուցչային կիրառություն):

³ Տե՛ս **Ярхо В., Лободы В.** Латинский язык. М., 1983, էջ 127:

⁴ Տե՛ս **Шведова Н.** и др. Русская грамматика. Т. I, М., 1980, էջ 481:

⁵ Տե՛ս **Լ. Եզնկյան**, Հայոց լեզու, Եր., 2007, էջ 342:

⁶ Տե՛ս **Кобрина Н., Болдырев Н., Худяков А.** Теоретическая грамматика современного английского языка. М., 2007, էջ 38:

Այդ պարագայում, բնականաբար, հարց է առաջանում, թե ինչն է նշված երեք տիպի բառակապակցություններից օրենսդրական տեքստում⁷ գերազանցապես կիրառվում է միայն Noun + of + Noun տիպը: Նախ փորձենք պարզել Noun + Noun տիպի բառակապակցությունների բացակայության պատճառը: Թեև ամերիկյան Սահմանադրության գրվելու ժամանակից (XVIII դ.) ավելի վաղ դեռևս Վ. Շեքսպիրի օրոք, Noun + Noun տիպի բառակապակցությունները բավական լայն կիրառություն են ունեցել և հետագայում փոխանցվել ժամանակակից անգլերենին⁸, այդուհանդերձ հատկանշական է, որ ամերիկյան Սահմանադրության մեջ նման տիպի բառակապակցություններ չեն հանդիպում:

Ինչպես հայտնի է, a stone wall տիպի որոշչային բառակապակցությունները ժամանակակից գրական անգլերենում սկզբից նեթ բավական լայն կիրառություն են ունեցել, մինչդեռ Civil Rights Bill տիպի հատկացուցչային բառակապակցությունների գործածությունը լեզվում մեծացել է հատկապես վերջին ժամանակներս⁹: Արդ, ամերիկյան Սահմանադրության տեքստում Noun + Noun տիպի բառակապակցությունների բացակայության պատճառը թերևս կարելի է վերագրել այն բանին, որ Սահմանադրության տեքստում of նախորդ կառույցները գերազանցապես հատկացուցչային կամ օբյեկտային հարաբերություն արտահայտող բառակապակցություններ են, մինչդեռ որոշչային հարաբերություն արտահայտող նշված տիպի բառակապակցություններ գրեթե չեն հանդիպում: Բայց հատկանշական է, որ Noun + Noun տիպի բառակապակցություններ գրեթե չեն հանդիպում նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, որի իրավական ակտերը թվագրված են 1950-ական թթ.-ից մինչև 2000-ական թթ., հետևաբար արդի անգլերենում լայն տարածում ստացող Noun + Noun տիպի բառակապակցությունները ժամանակագրական առումով սկզբունքորեն կարող էին արտացոլվել Կոնվենցիայի տեքստում: Ասվածից հետևում է, որ Noun + Noun տիպի բառակապակցությունների բացակայությունը օրենսդրական տեքստում պայմանավորված է այլ գործոններով: Նկատենք, որ Noun + of + Noun տիպի բառակապակցությունները Noun + Noun տիպի համեմատությամբ ունեն նաև այն առավելությունը, որ ավելի հստակ են արտահայտում համապատասխան շարահյուսական հարաբերությունը (հմմտ. the President appointment և the appointment of

⁷ Սույն հոդվածում աստիճանաբար բառակապակցությունները դիտարկվում են օրենսդրական տեքստի դասական օրինակ հանդիսացող ամերիկյան Սահմանադրության («The Constitution of the United States with Index and the Declaration of Independence Published by the Commission on the Bicentennial of the United States Constitution», Washington D. C. 1991) և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի («European Convention of Human Rights as amended by Protocols Nos». 11 supplemented by Protocols Nos. 1, 4, 6, 7, 12 and 13, «European Court of Human Rights», Council of Europe, F-67075, Strasbourg cedex, www.echr.coe.int) փաստական նյութի հիման վրա:

⁸ Տե՛ս T. Rastorguyeva, A History of English, Moscow, 1983, էջ 283:

⁹ Տե՛ս Дубенен Э. М., նշվ. աշխ., էջ 13-16:

the President): Եթե առաջին օրինակում առկա է հնարավոր երկիմաստություն՝ նախագահի՞ն են նշանակում, թե՞ նախագահի կողմից է նշանակվում (ինչ-որ մեկը), ապա երկրորդ օրինակում արտահայտված միտքն առավել հստակ է ու միանշանակ: Եվ քանի որ պաշտոնական ոճին բնորոշ են մտքի հստակությունն ու երկիմաստությունից հնարավորինս խուսափելու ձգտումը, ուստի օրենսդրական տեքստում of նախորդով կազմված բառակապակցություններին գրեթե բացարձակ նախապատվություն է տրվում: Հարկ է նշել, որ օրենսդրական տեքստում Noun + Noun տիպի բառակապակցությունների բացակայության մասին խոսելիս մենք բնականաբար նկատի չունենք այն դեպքերը, որոնցում այդպիսի բառակապակցությունների կիրառությունը հնարավոր կամ ցանկալի չէ անգլերենի շարահյուսական օրինաչափությունների տեսանկյունից: Հետևաբար տվյալ համատեքստում պարզապես անխուսափելի է Noun + of + Noun տիպի բառակապակցությունների գործածությունը, օրինակ՝

Spouses shall enjoy equality of rights and responsibilities of a private law character between them... (European Convention of Human Rights, p. 44, Article 5); ...the content or scope of the rights or freedoms defined in Section I of the Convention... (European Convention..., p. 26, Article 47):

Բերված օրինակներում equality of rights and responsibilities «իրավունքների և պատասխանատվությունների հավասարություն» և the content or scope of the rights or freedoms «իրավունքների և ազատությունների բովանդակություն կամ ընդգրկման սահման» of նախորդով կառույցները Noun + Noun տիպով (*rights and responsibilities equality, *the rights or freedoms content or scope) փոխարինելուն նախ և առաջ խանգարում է equality of rights and responsibilities և the content or scope of the rights or freedoms բառակապակցություններին հաջորդող of a private law character որոշիչ լրացման և defined in Section I որոշիչ դերբայական դարձվածի առկայությունը, քանի որ այդ դեպքում ամբողջ բառակապակցության իմաստը էապես կփոխվեր կամ առնվազն երկիմաստության տեղիք կտար: Բացի այդ, տվյալ դեպքում երկիմաստություն կառաջանար նաև and «և» և or «կամ» շաղկապներով կապակցված մեկից ավելի լրացումների առկայության հետևանքով, քանի որ *rights and responsibilities equality և *the rights or freedoms content or scope բառակապակցությունների պարագայում այնքան էլ պարզ չէ՝ արդյոք equality և content or scope լրացյալները վերաբերում են նախորդող լրացումներից միայն վերջինի՞ն, թե՞ երկուսին միաժամանակ:

Այսպիսով, կարելի է ասել, որ օրենսդրական տեքստում Noun + Noun տիպի բառակապակցությունների բացակայությունը պայմանավորված է երկիմաստությունից հնարավորինս խուսափելու ձգտումով, որն էլ իր հերթին բխում է պաշտոնական ոճի պահանջներից:

Այժմ մնում է պարզել, թե ինչու օրենսդրական տեքստում of նախդրով կառույցներին նախապատվություն է տրվում նաև Noun Genetive + Noun տիպի բառակապակցությունների հանդեպ: Այս դեպքում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ of նախդրով կառույցներն իրենց բնույթով միատարր ու համասեռ չեն: Այսպես, հատկացուցչային հարաբերություններ արտահայտող բառակապակցությունների մի մասում գոյական լրացումն անշունչ առարկա է ցույց տալիս, իսկ այլ բառակապակցություններում՝ շնչավոր առարկա: Ընդ որում, այս երկու դեպքում էլ լրացումները երբեմն դրված են հոգնակի թվով, երբեմն՝ եզակի: Մյուս կողմից, հատկացուցչային հարաբերություններից բացի, կան նաև շարահյուսական այլ հարաբերություններ արտահայտող Noun + of + Noun տիպի բառակապակցություններ: Կարծում ենք՝ նշված յուրաքանչյուր տիպի դեպքում of-ով կառույցների գործածությունը պայմանավորված է եղել մի շարք գործոններով: Նախ փորձենք դիտարկել այնպիսի բառակապակցությունները, որոնց մեջ լրացումներն անշունչ առարկաներ և վերացական գաղափարներ են ցույց տալիս և դրված են եզակի թվով, ինչպես նաև այն բառակապակցությունները, որոնց լրացում անդամները դրված են հոգնակի թվով՝ անկախ շնչավոր կամ անշունչ առարկա ցույց տալու հանգամանքից:

Ինչպես հայտնի է, արդեն XIII – XIV դդ. of-ով կառույցների կիրառությունը սեռական հոլովաձևի (Genitive Case) փոխարեն արագորեն մեծանում է, և դրան զուգահեռ հետզհետե սկսում է սահմանափակվել սեռական հոլովի կիրառության ոլորտը: Դրա հետևանքով նոր անգլերենում սեռական հոլովաձևը սկսում է կիրառվել հիմնականում շնչավոր առարկաների և ժամանակային հասկացություն արտահայտող բառերի դեպքում, իսկ անշունչ առարկաներ և վերացական գաղափարներ արտահայտող բառերի սեռական հոլովաձևն ընդհանուր առմամբ փոխարինվում է of + noun կառույցով¹⁰: Իհարկե, ժամանակակից անգլերենում վերստին սեռական հոլովաձևի կիրառության սահմանների ընդլայնման միտում է նկատվում, և այն հանդես է գալիս գոյականների, նաև այլ իմաստային խմբերի դեպքում, ինչպես՝ the book's fate, the car's front seat և այլն¹¹, սակայն հատկանշական է, որ այդ միտումը հիմնականում չի գործում օրենսդրական տեքստի պարագայում: Բնականաբար, XVIII դարում գրված ամերիկյան Սահմանադրության դեպքում ժամանակակից անգլերենին բնորոշ՝ սեռական հոլովաձևի գործառական ընդլայնման միտումի բացակայությունը ինքնին հասկանալի է նաև զուտ ժամանակագրական առումով:

Նկատենք նաև, որ դեռևս միջին անգլերենից սկսած՝ հոգնակի սեռական հոլովաձևը չունի հատուկ վերջավորություն, և որպես այդպիսին հանդես եկող (-e)s-ն առաջացել էր կամ եզակի սեռական, կամ

¹⁰ Տե՛ս T. Rastorguyeva, նշվ. աշխ., էջ 227-229, B. Ilyish, նշվ. աշխ., էջ 275:

¹¹ Տե՛ս Дубенев Э. М., նշվ. աշխ., էջ 17, B. Ilyish, նշվ. աշխ., էջ 275:

հոգնակի ուղղական հոլովների համաբանությամբ, որի հետևանքով եզակի սեռական, հոգնակի ուղղական և սեռական հոլովները ձևով համընկել էին, օրինակ՝ եզ. ուղղ. ston-քար, եզ. սեռ. stones, հոգ. ուղղ. stones, հոգ. սեռ. stones¹²: Ընդհանուր առմամբ, նշված ժամանակահատվածում եզակի և հոգնակի ուղղական հոլովաձևերի միջև ձևային տարբերությունն ավելի է ընդգծվում, մինչդեռ եզակի և հոգնակի սեռական հոլովաձևերի միջև տարբերությունը վերանում և չեզոքանում է: Ի դեպ, ժամանակակից անգլերենում նույնպես այդ տիպի բառակապակցություններում նախապատվություն է տրվում of-ով կառույցներին¹³:

Անշուշտ, վերը նշված լեզվական գործոններով բացատրվում և պատճառաբանվում է Noun + of + Noun տիպի բառակապակցությունների մի զգալի մասի առկայությունը օրենսդրական տեքստում, ինչպիսիք են, օրինակ՝

Office of Trust or Profit (Constitution of the United States of America, Article II, p. 9), Bills of Credit (Constitution..., Article I, p. 8), the Recess of the Senate (Constitution..., Article II, p. 12), Jurisdiction of Crime (Constitution..., Article IV, p. 14), Immunities of Citizens (Constitution..., Article IV, p. 14), Number of Electors (Constitution..., Amendment XXIII, p. 31), the Judge of the Elections (Constitution..., Article I, p. 4); the Representatives of the Parties (European Convention of Human Rights, Article 38, p. 22), the Rights of Parents (European Convention..., Article 2, p. 32), the Rights and Freedoms of Others (European Convention..., Article 2, p. 35), the Equality of Persons (European Convention..., Protocol No. 12, p. 48), the Secretary General of the Council of Europe (European Convention..., Article 5, p. 36), the Jurisdiction of the Same State (European Convention..., Article 4, p.43), the Competence of the Court (European Convention..., Article 6, p. 45) ևն:

Սակայն օրենսդրական տեքստում հանդիպում են of նախորդով կազմված նաև այնպիսի կառույցներ, որոնց կիրառությունը, կարծում ենք, պայմանավորված է այլ հանգամանքներով: Օրինակ՝ օբյեկտային հարաբերություն արտահայտող the removal of President տիպի բառակապակցություններում of-ով կառույցներին նախապատվություն տալը թերևս կարող է բացատրվել երկիմաստությունից խուսափելու միտումով, եթե նկատի ունենանք, որ սեռական հոլովաձևով կազմված համապատասխան բառակապակցություններում հստակ կերպով չեն տարբերակվում օբյեկտային և սուբյեկտային հարաբերությունները¹⁴: Այսպես, the President's removal բառակապակցության իմաստը հավասարապես կարող է ընկալվել և՛ որպես նախագահի հեռացվելը աշխատանքից, և՛ որպես նախագահի կողմից ինչ-որ մեկի հեռացվելը աշխատանքից:

¹² Տե՛ս T. Rastorguyeva, նշվ. աշխ., էջ 224-229, Ա. Գալստյան, Շ. Պարոնյան, Անգլերենի պատմության հիմնահարցեր, Եր., 2008, էջ 177-178:

¹³ Տե՛ս Кобринa Н., Болдырев Н., Худяков А., նշվ. աշխ., էջ 41:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 35-41:

տանքից: Մինչդեռ the removal of President բառակապակցության դեպքում օբյեկտային հարաբերությունն անշուշտ ավելի հստակ է արտահայտվում: Այդ կապակցությամբ որպես լրացուցիչ փաստարկ կուզենայինք նշել հետևյալ հանգամանքը: Ուշագրավ է, որ ժամանակակից անգլերենի այնպիսի բառակապակցությունների դեպքում, որոնք միաժամանակ արտահայտում են թե՛ սուբյեկտային և թե՛ օբյեկտային հարաբերություններ, սուբյեկտային հարաբերությունն արտահայտվում է սեռական հոլովածնի միջոցով, իսկ օբյեկտային հարաբերությունը՝ of նախդրի միջոցով. օրինակ՝ this historian's new appreciation of the Great Britain King, որտեղ պատմաբանը գնահատողն է, այսինքն՝ տրամաբանական սուբյեկտը, իսկ թագավորը՝ գնահատվողը, այսինքն՝ տրամաբանական օբյեկտը: Ընդ որում, այս դեպքում of նախդրի միջոցով օբյեկտային հարաբերությունն այնքան հստակ և ընդգծված է արտահայտվում, որ տվյալ բառակապակցության մեջ տրամաբանական սուբյեկտի և օբյեկտի տեղերը փոխելու դեպքում փոխվում է ողջ բառակապակցության իմաստը՝ the Great Britain King's new appreciation of this historian: Այս դեպքում արդեն տրամաբանական սուբյեկտը Մեծ Բրիտանիայի թագավորն է, իսկ տրամաբանական օբյեկտը՝ պատմաբանը: Հետևաբար, անգլերենում of նախդրի միջոցով օբյեկտային հարաբերությունն ավելի հստակ է արտահայտվում, և այդ պատճառով էլ նախապատվությունը տրվում է այդ լեզվական միջոցին:

Եվ, վերջապես, կուզենայինք անդրադառնալ of-ով կառույցների մեկ այլ խմբի ևս, որոնցում թեև ինչպես XVIII դարի, այնպես էլ ժամանակակից անգլերենի լեզվական նորմերին համապատասխան կարող էին կիրառվել սեռական հոլովածներ, սակայն դարձյալ նախապատվություն է տրվել of-ով կառույցներին: Խոսքը վերաբերում է the life of the person, the consent of the owner, the terms of the president, the free assistance of an interpreter տիպի հատկացուցչային բառակապակցություններին, որոնք ունեն շնչավոր առարկա ցույց տվող և եզակի թվով դրված գոյական լրացումներ: Նմանատիպ դեպքերը բացատրելու համար անհրաժեշտ է պարզել, թե իմաստային ինչ տարբերություն է առկա շարահյուսական միևնույն հարաբերությունն արտահայտող սեռական հոլովածնով և of նախդրով կազմված երկու գուգահեռ բառակապակցությունների միջև, օրինակ՝ the doctor's arrival և the arrival of the doctor: Այդ երկու բառակապակցությունների միջև նկատելի է շատ նուրբ, բայց կարևոր իմաստային տարբերություն: Մասնավորապես՝ the doctor's arrival-ի դեպքում տրամաբանական շեշտն ընկնում է լրացման վրա, և իմաստային տեսանկյունից ավելի շատ կարևորվում է doctor's բառը, և ընդգծվում է ո՞ւմ կամ ինչի՞ հարցը, այսինքն՝ բժշկի և ոչ թե տնօրենի կամ որևէ այլ մեկի ժամանումը (կամ առնվազն լրացումն ու լրացյալը կարևորվում են հավասարապես, և լրացյալը հատուկ չի ընդգծվում): Մինչդեռ the arrival of the doctor-ի դեպքում տրա-

մաքանական շեշտի և իմաստային կարևորության տեսանկյունից առաջին պլան է մղվում լրացյալը: Այլ կերպ ասած՝ այս դեպքում ընդգծվում է ոչ թե ում կամ ինչի՝ ն պատկանելը, այլ հենց ի՛նչը՝ բժշկի ժամանումը, այլ ոչ թե փախուստը կամ մեկ այլ բան: Թերևս հենց այդ հանգամանքով կարելի է բացատրել the life of the person, the consent of the owner տիպի բառակապակցություններում of նախդրով կառույցներին բացարձակ նախապատվություն տալը, որի շնորհիվ առավել ընդգծվում և կարևորվում է անձի կյանքը, սեփականատիրոջ համաձայնության փաստը և այլն, մանավանդ եթե նկատի ունենանք, որ օրենքը ընդհանրական բնույթ ունի, այն անձնավորված և անհատականացված չէ, և դրանով իսկ առավել կարևորվում է ինչը, քան թե ում կամ ինչին պատկանելը:

Այսպիսով, վերը կատարված քննությամբ մենք հանգում ենք այն եզրակացության, որ անգլերենին բնորոշ ատրիբուտային բառակապակցության երեք տիպերից օրենսդրական տեքստում գերազանցապես հանդիպում է Noun + of + Noun տիպը: Մյուս երկու տիպերից Noun Genitive + Noun տիպի ընդամենը մեկ օրինակ է հանդիպում բուն Սահմանադրության տեքստում, իսկ 1969-1986 թթ. Սահմանադրությանը կցված փոքրիկ նախաբանում՝ ևս երկու օրինակ: Նմանապես Կոնվենցիայի տեքստում՝ Noun + of + Noun տիպի բազմաթիվ բառակապակցությունների կողքին Noun Genitive + Noun տիպի ընդամենը մեկ-երկու օրինակ է հանդիպում: Ընդ որում, ինչպես տեսանք, օրենսդրական տեքստում of նախդրով կազմված բառակապակցություններին բացարձակ նախապատվություն տալը պայմանավորված է մասամբ անգլերենի շարահյուսական օրինաչափությունների պահանջով, իսկ հիմնականում երկիմաստությունից հնարավորինս խուսափելու և ասելիքն առավել ընդգծելու միտումով (ԱՄՆ Սահմանադրության պարագայում՝ թերևս մասամբ նաև XVIII դարի անգլերենի քերականական նորմերի թելադրանքով), որն էլ իր հերթին բխում է պաշտոնական ոճի պահանջներից:

Բանալի բառեր – *ատրիբուտային բառակապակցություն, օրենսդրական տեքստ, շարահյուսական օրինաչափություններ, noun + of + noun տիպի բառակապակցությունների լայն գործածությունը, գործառական արժեք*

АННА АКОБЯН – *Функциональная значимость в английском языке атрибутивных словосочетаний в законодательном тексте.* – В статье выявляются главные факторы, обусловившие широкое употребление в законодательном тексте атрибутивных словосочетаний типа noun + of + noun и почти полное отсутствие других двух типов атрибутивных словосочетаний, характерных для английского языка, а именно noun + noun и noun genitive + noun. Приводятся доводы, что указанное явление обусловлено частично требованиями грамматических норм языка, но преимущественно желанием подчеркнуть выражаемую мысль и избежать двусмысленности.

Ключевые слова: атрибутивные словосочетания, законодательный текст, синтаксические закономерности, широкое употребление словосочетаний noun + of + noun, функциональная значимость

ANNA HAKOBYAN – *The Functional Value of Attributive Phrases in Legislative Texts in English.* – In this article an attempt is made to reveal the main factors which condition the wide use of “noun + of + noun” phrases, and the almost lack of the other two types of attributive phrases typical of English, namely, “noun + noun” and “noun genitive + noun” in legislative texts. It is argued that the above mentioned is partly accounted for by the requirements of the grammatical norms of English but mainly by the tendency to emphasize the meaning of the utterance and avoid ambiguity.

Key words: *attributive phrases, legislative texts, syntactic regularities, the wide use of “noun + of + noun” phrases, functional value*